

ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԾԵՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցին Հին Թիֆլիսի հանրայայտ ու նշանաւոր հայկական եկեղեցիներից է. գտնուում է քաղաքի կենտրոնական եւ հնագոյն թաղամասում՝ Մէյլան հրապարակի հարեւանութեամբ, ներկայիս Կոտէ Ավիտագի (նախկին Լեսելիձէի) փողոցում, № 41, վրաց առաջնորդանիստ Սուրբ Սիոն եւ յունական Զվարիս Մամա եկեղեցիներին մօտ:

Ինչ վերաբերում է Նորաշէնի անուանմանը (ծագում է հայերէն նորակառոյց բառից), ապա եկեղեցին իր ամբողջ պատմութեան ընթացքում յիշատակուել է Սուրբ Աստուածածին անունով եւ երբեք Աւետեաց Սուրբ Աստուածածին չի կոչուել, ինչպէս սիսալմամբ գրել է Պ. Մուրագեանը¹: Հաւանաբար այս մտայնութիւնն էլ հիմք է հանդիսացել որոշ վրաց հոգեւորականների՝ շինութիւնն անուանել վրաց Խարեճա (թարգմանաբար՝ Աւետեաց) եկեղեցի, որ եւ 1995 Փետրուարի 15ին փորձել են օծել վրաց եկեղեցու ծիսակարգով:

Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցին ճարտարապետական յօրինուածքով պատկանում է գմբեթաւոր բազիլիկ կառոյցների տիպին: Այն քառակուսի յատակագծով, աղօթասրահը (լայնութեան եւ երկարութեան յարաբերութիւնը 1:1,2) երկու զոյտ հզօր գլանաձեւ մոյթերով (1,55մ տրամագծով) բաժանուում է երեք թաղածածկ նաւեր: Շինութեան գմբէթը դրուած է արեւելեան մոյթերի եւ աւագ խորանի անկիւնների վրայ: Աւանդաշին մոյթերի եւ աւագ խորանի անկիւնների: Արեւմտեան ճաղատներն ուղղանկիւն են, առանց աբսիդների: Արեւմտեան ճա-

¹ ՄՈՒՐԱՏԵԱՆ, Պ., Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Եջմիածին, 2009, 39: Նոյն Թիֆլիսի հայոց նորաշէն եկեղեցու իրական պատմութիւնը, ի էջմիածիմ, 2008, Ե., 92: Նոյն Արմանակա Էպիգրաֆիկա Հրատակութեան մասին առաջարկը, Երևան 1988, 76:

կատի վրայ՝ երկթեք տանիքին, բարձրանում է թեթեւ, սիւնագարդ զանգակատունը²:

Հստ եկեղեցու հիմնադրման վերաբերեալ մեզ հասած արձանագրութեան, այն կառուցուել է 1507 թուականին, իսկ յետագայ դարերի ընթացքում մի քանի անգամ ենթարկուել է մեծ ու փոքր նորոգութիւնների: Արձանագրութիւնում գրուել է. «Ի թուին ԶԾԶ [1507] Յանուն Աստուծոյ ես՝ Սատար մուլքս շինեցի զեկեղեցի՝ յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց՝ հօրն իմոյ պարոն Սուլտանին եւ պապուն իմոյ պարոն Թաւաքալին, եւ կողակցւոյն իմոյ Վիշելին, որդոց՝ Նարիմանին, Սուլտանին եւ Շարիմանին»³: Հստայսմ⁴ 1507 թուականին Սատաթ անունով մի հայ մեծատուն իշխանական կամ տոհմիկ ծագում ունեցող (այդ պարագայում մի-այն նրանք պարոն կարող էին կոչուել) պապի՝ Թաւաքալի, հօր՝ Սուլտանի, իր կողակից Վիշելի, որդիներ Նարիմանի, Սուլտանի (պապի անունն է կրում), Շարիմանի եւ իր յիշատակի պահպանութեան համար եկեղեցի է կառուցել⁴:

Նորաշէնի Սուլրը Աստուածածին եկեղեցին 1507ի կառոյց է համարել նաեւ ճարտարապետ Մ. Հասրաթեանը⁵: Սակայն հայկական թուագրութեան ԶԾԶում՝ Ծ.ն որոշ ուսումնասիրողներ կարգացել են՝ Ժ., ինչի արդիւնքում ստացուել է 1467 թուականը, որն էլ թերեւս եկեղեցին այդ թուականի շինութիւն համարելու հիմք է դարձել:

Մէկ այլ յիշատակութիւն նորաշէնի մասին պահպանուել է Ներսէս Աշտարակեցու՝ Վիշահայոց թեմի առաջնորդութեան շըրջանից, երբ նա Թիֆլիսի եկեղեցիների աւագերէցներից եւ հոգաբարձուներից պահանջել էր ներկայացնել իրենց եկեղեցիների հիմնարկութեան եւ նորոգութեան մասին գրաւոր պատմական տեղեկութիւններ: Պատասխան գրութիւնների շարքում, ի թիւս Թիֆլիսի հայկական եկեղեցիների, կարեւոր տեղեկութիւններ են թիֆլիսի հայկական եկեղեցիների, կարեւոր տեղեկութիւններ են ներկայացուել նորաշէնի Սուլրը Աստուածածին եկեղեցուն վերա-

2 ՀԱ.ԱՐԱԹԵԱՆ, Մ., Թրիլիսի հայկական եկեղեցիների ճարտարապետութիւնը, ի էջմիածին, 2009, Զ., 74:

3 ՄՈՒՐԱՏԵԱՆ, Պ., Հիմնարկութիւնների պահպան, 45:

4 Առյն, 46:

5 ՀԱ.ԱՐԱԹԵԱՆ, Մ., Աշխարհագույն պատմութեան մասին, 74:

6 Տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, Կարողիկոսական դիւան (այսուհետ՝ ՄՄ, կ/դ), բդր. 44, վաւ. 347, թ. 1:

բերող չորս արձանագրութիւնների մէջ: Դրանցից առաջինը վիմագրի բնօրինակն է, որն էլ թուագրուած է 1507, իսկ միւս երեքը՝ վիմագրերի բովանդակութեան վերապատմումն է: Պատմաբան-ուսումնասիրողներից Պ. Մուրագեանը, հիմնուելով Ներսէս Աշտարակեցուն ներկայացուած բնագրի վրայ, ճշգրտել է եկեղեցու հիմնագրման տարեթիւը⁷:

Յաւօք, հին արձանագրութեան վերաբերեալ տեղեկութիւններ ժթ. դարի կէսերից ի վեր այլեւս չկան, սակայն Պ. Մուրագեանն արձանագրել է, որ գոյութիւն ունի նաեւ ձեռագրի երկրորդ օրինակը, որ պահպանում է Թիֆլիսի ձեռագրերի ինստիտուտի հայկական վաւերագրերի հաւաքածոյում (Արտ. ճ. 156):

Նորաշէնի կառուցման վերաբերեալ պահպանուել է նաեւ անանուն հեղինակի մի ուշագրաւ պատում, ըստ որի, երբ չահԱբասը 1617ին գրաւել է Թիֆլիսը եւ հայերի ձեռքից վերցրել Նարիղալայի մօտ գտնուող Սուրբ Կաթողիկէ եկեղեցին. «Այն ժամանակ Հայոց ազգն եկան Բաղաքի մէջ, շինեցին միւս Փոքր Կաքողիկէ եկեղեցի եւ անունն որին նորաշէն»⁸: Առկայ է նաեւ մէկ այլ յիշատակութիւն, որտեղ նշւում է. «Նորաշէն Կաքուղիկէ եկեղեցոյ շինութիւնն, որ էլաւ 1649 եւ 1650 թուին, հայոց ՌԴ եւ ՌԴԹ թուին, այլ պատճառ եւս ունի: Որովհետեւ Հին Կաքուղիկէ եկեղեցին շինուած էր այն հրապարակի մօտ, որ կասուի Թուրքի մէյտան, մեր Հայոց կանանց պարկեշտութեան չէր վայելում թուրքաց մէջէն անցուդարձ անել, էնուուր համար նորաշէն Կաքուղիկէն ուղացան ունենալ Բաղաքի մէջ, որ իսկական Հայոց թաղումն էր, եւ կանանց՝ թուրքաց աչքէն պահպանուելու համար»¹⁰:

Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցին տարբեր ժամանակներում նորոգուել է, ինչպէս Թիֆլիսի հայութեան ջանքենութիւնների մեկենասութեամբ: Եկերով, այնպէս էլ մի շարք բարերարների մեկենասութեամբ: Եկեղեցին մասնաւորապէս նորոգուել է 1650, 1795, 1808, 1830-1835, զեցին մասնաւորապէս նորոգուել է 1857, 1897 թուականներին. անշուշտ, նորոգութիւններ եղել են 1857, 1897 թուականներին. անշուշտ, նորոգութիւնների եւ յարակից շինաեւ յետագայում: Եկեղեցու նորոգութիւնների եւ յարակից շինաեւ յետագայում:

7 ՄՈՐԱԴՅԱՆ, Պ., Արմանսկայ Էպիգրաֆиկա Հրանու, 75: Հեղինակի հիմքը եղել է հետևեալ վաւերագրը՝ ՄՄ, Կ/դ, թ-ըթ. 29, վաւ. 125:

է հետևեալ վաւերագրը՝ ՄՄ, Կ/դ, թ-ըթ. 29, վաւ. 125:

8 ՄՈՒՐԱԾԵՍՆ, Պ., Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, 138:

9 Արարատ, 1850, Ա. տարի, № 4, սեպտեմբերի 23, 53-54: Տե՛ս նաև ՄՈՒՐԱԾԵՍՆ, Պ., Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, 46:

10 Ա.Յու.

նութիւնների վերաբերեալ պահպանուած բազմաթիւ յիշատակութիւններն ու արձանագրութիւնները՝ վկայում եւ հաստատում են, որ Նորաշչնի Սուրբ Աստուածածին եկեղեցին թիֆլիսահայութեան կեանքում շատ մեծ կարեւորութիւն ու նշանակութիւն է ունեցել, եւ նրա մշտապայծառութեան համար միջոցներ ու ջանքեր չեն խնայուել:

Մանիա Ղազարեանը յատուկ անդրագարձել է Նորաշչնի Սուրբ Աստուածածին եկեղեցուն՝ նշելով, որ եկեղեցու ներսը 1793ի որմնանկարներով զարդարել է Յովինաթան Յովինաթանեանը¹¹:

1650ին եկեղեցին հիմնովին նորոգուել է ջուղայեցի մեծատուն Խոջա Նազարի միջոցներով. «Ի թուին ՌՂԹ. (1650) շինեալ է Խօջայ Նազարն եւ զկնի շինութեան եկեղեցւոյ բոլոր իշխանութիւնն յանձնեալ է ի ձեռս հանգուցեալ Մելիք Աշխարհէգին Բէկրուդեան, հաստատուն գրով, որոյ սոյն գրոյ թիւն է 1714»¹²: Իսկ եկեղեցու կառուցող վարպետը եղել է ուստա Պետրոս Ջուղայեցին. «ԹՎ[ԻՆ] ՌՂԹ [1650] ՍՈՒՐԲ ԽՍ. ՔԱՐԵԽՍ. Է ՈՒՍՏԱ. ՊԵՏՐՈՍԻՆ ԶՈՒՂԱՅԵՑԻ, ՈՐ ՇԻՆԵԱ. ԶԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ, ՅԻ-ՇԵՑՔԻ Ի ՔՐԻՍՏՈՍ, ԱՍՏՈՒԱԾ ՕՂՈՐՄԻ Ա.ՍՍ. ՅԵՒ. ԱՄԷՆ»¹³, Նորոգման տարեթուի հաստատում է նաեւ եկեղեցու ներսում ագուցուած՝ նոյն թուականին վերաբերող գեղաքանդակ մի խաչքարի արձանագրութիւնը. «Սուրբ Խաչ բարէխաւս է Նազարին եւ / կողակցուն՝ Եագունդուն, եւ որդուցն՝ / Պաղինին, Բաղդասարին, եւ ծնողացն՝ / Բերդիմին, Բէգիխաքունին, եւ եղբարցն՝ / Շարոյին եւ Զուրապին: Ի թուականին ՌՂԸ (1649)»¹⁴: Խոջա Նազարը նորոգումն աւարտելուց յետոյ, եկեղեցու «բոլոր իշխանութիւնը» պաշտօնական «հաստատուն գրով» (Հիմա՝ յատուկ նուիրագրով) յանձնել է հանրայայտ Աշխարհէկ Բեհրուդեանին, որ ոչ միայն հայէր, այլ նաեւ Խոջա Նազարի հայրենակիցը՝ Նոր Ջուղայից: Բեհրուդեան, այդ ժամանակներից սկսած՝ Նորաշնը պատկանել է Բեհրուդեան տոհմին. Նրանք մեծ հարստութեան տէր են եղել եւ բուղեան տոհմին. Նրանք մեծ հարստութեան տէր են եղել եւ բաղդեցիկ դիրք գրաւել քաղաքում: Յայտնի է, որ նրանք Թիֆլիսի գրաւել քաղաքում:

11 ՊԱԶԱՐԵԱՆ, Մ., Հայկական կերպարուեստը 17-18-րդ դդ.: Գեղանկարչութիւն, Երեւան, 1974, էջ 206:

12 ՄՈՒՐԻՐԱԴԵԱՆ, Պ., Հիմ Թիֆլիսի հայոց եկեղեցիները, 45:

13 ՄՈՐԱԴՅԱՆ, Պ., Արմանական պատկերագիր 76.

14 Արարտ, 1850, Ա. տարի, թիւ 4, սեպտեմբերի 23, 53:

Աստուածածին եկեղեցին: Վերջինիս նորոգման աշխատանքները ինչ-ինչ պատճառներով ձգձգուել ու տեւել են տարիներ: Այն դեկավարել է քաղաքի եկեղեցիների գործակալ Տէր Ղազարը՝ Մկրտում Մունթոյեանի եւ մի քանի այլ նշանաւոր հայերի աջակցութեամբ. «ՈՒՄԾԷ [1808] քուին գործակալ Տէր Ղազարն համակամութեամբ պարոն Մկրտում Մունթօյեանին եւ քանի մի պատուելի անձանց սկիզբն արար շինութեան»¹⁸: Նշենք, որ Մկրտում Մունթոյեանը, որի համաձայնութեամբ էր սկսուել նորաշէնի նորոգումը, յիշատակուում է գեռեւս 1751ին Թիֆլիսի մէկ այլ Մողնու Սուրբ Գէորգ եկեղեցու արձանագրութեան մէջ:

Վորոյիշեալ նորոգման ընթացքում եկեղեցու մուտքի վերնամասում արձանագրուել է. «Ա.Ա.Ս ՕՐՀՆԵՑ[է]Ք ԶՏԵՐ ԱՄ[ԵՆՍ.ՅՆ] ԾԱՌԱՅՔ ՏԵ[Ա.Ի.]Ն»¹⁹:

Ի թիւս այս յիշատակութիւնների նշենք, որ պահպանուել են նաեւ 1809ի եկեղեցու շինարարութեան վրայ կատարուած ծախսերի եւ շինարարութեան օգտին հաւաքուած նուրիատուութիւնների մատեանները²⁰, որոնց վերաբերեալ տարեվերջին կազմուել է նաեւ եկեղեցու եկամուտների ցուցակը²¹:

Նորաշէնի յաջորդ նորոգումը եղել է 1830-1835ին, ծախսուել է 11,563 ռուբլի գումար²²: Այդ նորոգութիւնից յետոյ՝ 1837ին, եկեղեցին նկարագրել է եգեատի Խոսելիանին, նշելով այն որպէս հայոց չորրորդ եկեղեցի. «Թագաւորական քարվանսարայի արեւմտեան կողմում կայ նորաշէն (Ախալշէնի) կոչուած մի եկեղեցի՝ յանուն վերափոխման Աստուածածնի, գմբեթ-աւոր, բարեշէն ացի՝ յանուն վերափոխման Աստուածածնի, գմբեթ-աւոր, բարեշէն անիւսով ու կրով, չորս սեան վրայ կառուցուած: Գմբեթը սեւ տաղիւսով ու կրով, չորս սեան վրայ կառուցուած: Գմբեթը սեւ տաղիւսած սալաքարերով է ծածկուած, իսկ թեւերը՝ կարմիր աղիւսակի նիմինդրով: Դրսից սրա տեսքը աւելի դուրեկան է, քան ներքուստ: Հիմնադրուած է նախ ոմն Խոջա Խազարի ծախքով, և ապա շենքը շարունակել են եւ աւարտել Տիֆլիսի կանանց եւ արանց ձեռներեշարունակել են եւ աւարտել Տիֆլիսի կանանց յեցութեամբ «հաւաքուած» միջոցներով՝ 1737 քուին. եւ նրանից յեցութեամբ «հաւաքուած» միջոցներով՝

18 Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), գ. 332, գ. 1, գ. 102, թ. 4:

19 ՄՈՐԱԴՅԱՆ, Պ., *Արմանսկая Эпиграфика Грузии*, 77.

20 ՄՄ, Կ/դ, թղթ. 21, վաւ. 20, վաւ. 21:

21 ՄՄ, Կ/դ, թղթ. 21, վաւ. 86:

22 ՀԱԱ, գ. 53, գ. 1, գ. 2637, թ. 16 շրջ., բնագիր, ձեռագիր:

մասին: Հստ կազմած նախահաշուի, նորոգութեան համար անհրաժեշտ է եղել 2000 ռ., պակասող գումարը երէցփոխանը խոստացել է լրացնել այլ եկամուտներից: Հարկ է նշել, որ Վարդանեան եղբայրներն էլ ցանկութիւն էին յայտնել իրենց միջոցներով նորոգել պարապի մուտքը²⁷:

Յաջորդ տարի, Փետրուարի 5ին Սինոդը քննարկել է խնդրագիրը եւ թոյլատրել ըստ ներկայացուած մակարդակի եւ նախահաշուի նորոգել եկեղեցու պարիսպը²⁸:

1899 Հոկտեմբերի վերջին նկարիչների Վ. Միրզոյեանցը եւ Մ. Գուրչտէյնը կազմել են եկեղեցու ներքին նորոգութիւնների նախահաշչերը: Նշուել է, որ Ս. Ստեփաննոսի եւ Ս. Լուսաւորչի երկու մեծ պատկերները հարկաւոր է նորից նկարել իրենց շըրջանակներով՝ այդ աշխատանքը գնահատելով 40 ռ.: Աշխատանքի ընդհանուր գումարը կազմել է 1154 ռ.²⁹:

1900 Դեկտեմբերի 13ին երէցփոխանը Վիրահայոց կոնսիստորիային գրել է, որ «...նորոգեցաւ նորաշենու Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ ներսի կողմի թէ՛ սեղան, թէ՛ պատկերներ, եւ թէ՛ պատեր ամբողջովին, բացի ներքի մասից՝ այսինքն մեկ արշին եւ կես բարձրութիւն, համաձայն մեր կազմածի, որ ունեինք նկարիչ Միրզոյեանցի հետ...»³⁰:

Այդ նորոգութիւնը նշուել է եկեղեցու 1900 թուականի արձանագրութեան մէջ. «ՎԵՐԱՆՈՐՈՂԵՑԱԿ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՐԺ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅՅԻ ՇԻՈԵԱՆԻ ԵՒ ԵՐԻՑՓՈԽԱՆՈՒԹԵԱՄԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԲԱՅՈՍ ԲԱՅՈՍՂՈԼԵԱՆ: 1900 Թ.»³¹:

Անկասկած, այսօրինակ բազմաթիւ յիշարժան վկայութիւնների եւ արձանագրութիւնների վերաբերեալ պահպանուած տեղեկութիւնների շարքը կարելի է գեռ շարունակել, սակայն յատկանշական է, որ թիֆլիսահայութեան կեանքում իր մեծ դերակատարութեամբ աչքի ընկած նորաշէնի եկեղեցին չի փրկել կատարութեամբ աչքի ընկած նորաշէնի եկեղեցին չի փրկել նոյնիսկ օտարների աչքից, ովքեր իրենց վկայութիւններում շատ մեծ ակնածանքով են խօսել հայկական նորաշէնի մասին:

27 ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 9366, թ. 1, թիվ, ձեռագիր:

28 ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 9366, թ. 2, թիվ, ձեռագիր:

29 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3399, թ. 2, թիվ, ձեռագիր, նաև՝ էջմիածին, 2010/ է, 76-77:

30 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 3399, թ. 11, թիվ, ձեռագիր:

31 ՄՈՐԱԴՅԱՆ, Ա., Արմանական գրապահություն, 81.

Նորաշէնի եկեղեցուն անդրագարձել են Թիֆլիս այցելած մի շարք ճանապարհորդներ: 1673ին ֆրանսիացի ժան Շարդէնը նորաշէնը թուարկել է հայկական գործող եկեղեցիների շարքում եւ նշել: «Նորաշէն կամ նոր շինութիւն»³²: Անշուշտ, նկատի է առնուել 1650ի հիմնովին նորոգումը: Շարդէնից շուրջ երեք տասնամեակ անց՝ 1701ին Թիֆլիս է այցելել նրա հայրենակից կենսաբան Ժոզէֆ-Պիտոսոն Տուրնեֆորը, եւ դատելով նրա՝ քաղաքում ներկայացրած հայկական եկեղեցիների թուից, նկատելի է, որ Նորաշէնը կար եւ գործող էր³³: 1817ին Թիֆլիս է այցելել իտալացի Ա. Նեգրին, իսկ 1824-30՝ նրա հայրենակից Մ. Մեդիչին, որոնք նոյնպէս յիշատակելով քաղաքի հայկական եկեղեցիները, դրանց թուում նշել են նաև Նորաշէնի Սուրբ Աստուածածինը³⁴: Այսպէս, օտար ճանապարհորդները յատակ նշել են Նորաշէնի հայկական պատկանելութեան մասին:

Հետաքրքրական է նաև ԺԹ. դարի սկզբում Մխիթարեան միաբան Հայր Ղուկաս ինձիճեանի աշխատութիւնը, որտեղ Թիֆլիսի տասներեք հայկական եկեղեցիների շարքում Նորաշէնը լիսի տասներեք հայկական եկեղեցիների շարքում Նորաշէնը լիսի տասներորդ տեղում³⁵: Իսկ նոյն դարում Վրացերէ-թուարկուել է տասներորդ տեղում³⁶: Իսկ նոյն դարում Վրացերէ-նով կազմուած՝ հայոց եկեղեցիների ցանկում քսանմէկ գործող պաշտամունքային կառոյցների շարքում Նորաշէնը նշանակուել է տասներկուերորդ համարի տակ³⁷:

Նորաշէնի վերաբերեալ յիշատակութիւններ են պահպանուել նաև բազմաթիւ այլ վաւերագրերում: 1773ին հայոց Սիմոն Երեւանցի կաթողիկոսը կոնդակով ներկայացրել է Թիֆլիսիոն Երեւանցի կաթողիկոսը բեթղեհէմի եկեղեցիների՝ Հաղքատիսի Նորաշէն, Մողնու եւ Բեթղեհէմի եկեղեցիների՝ հորդողիկոսի յորդորի, հայվանքին պատկանելը³⁸: Ի պատասխան կաթողիկոսի յորդորի, հայվանքին պատկանելը՝ աւագերէցներն ու քահանաները «համահակական եկեղեցիների աւագերէցներն ու քահանաները անութեան ձեռագիր» են ուղարկել էջմիածին, որ ստորագրուել տանութեան ձեռագիր: Են ուղարկել էջմիածին, որ ստորագրուել է գործող վեց եկեղեցիների հոգեւորականների կողմից, որոնցից

32 ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., Աշ. աշխ., 312:

33 ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., Աշ. աշխ., 39:

34 ՀԱ.Ա. Փ. 469, ց. 14, գ. 329, թ. 11, ուսւերէն, բնագիր, ձեռագիր:

35 Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Աշխատափրութեամբ

36 Աշխարհագրութիւն հայրից մասանց աշխարհի. Իմբիթեամի կոստամելնուպօլսեցւոյ, Վենետիկ 1806, 277:

36 ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., Աշ. աշխ., 44:

37 ՄՄ, Ա/Դ, թղթ. 243, վաւ. 36:

չորրորդը՝ Նորաշէնի աւագերէց Տէր Մելիքսէթն ու քահանայ Տէր Գաբրիէլն էին: Նոյն տարում Նորաշէնի քահանայ է յիշատակուել նաեւ Տէր Առաքելը³⁸: Հարկաւ, մի քանի վաւերագրեր հաստատում են Նորաշէնի՝ Հաղբատի վանքին պատկանելը, եւ այն Վիրահայոց թեմի մէջ է մտել միայն յետագայում: Յատկանշական է 1779ի Նորաշէնի եկեղեցուն կից տարածքի հետ կապուած վէճը, որ հարթելու համար վրաց Հերակլ արքայի կողմից հեղինակաւոր յանձնաժողով է կազմուել: Վերջինս ուսումնասիրելով վիճաբանութիւնը, անդրադարձել է անցեալին եւ նշել, որ երբ Հերակլ արքան թիֆլիսի բերդը թաթարներից գրաւեց, «այն ժամանակ բերդի ներսում Նորաշէնի այս հին տանարը երեւան եկաւ, եւ քանի որ հեռում Հաղբատի եկեղեցուն էր պատկանել՝ նոյն եկեղեցուն էլ նուիրեց»³⁹:

Անրադառնալով Նորաշէնի եկեղեցու տնտեսութեան, նշենք, որ բազմաթիւ են այն տեղեկութիւնները, որոնք խօսուն փաստեր են ներկայացնում եկեղեցու ունեցուածքի, կալուածքների, ստացած եկամուտների եւ կատարած ծախսերի վերաբերեալ: Պահպանուել են բազմաթիւ գրութիւններ, եկեւմտից եւ եկեղեցու հաշիւնների վերաբերեալ մի շարք մատեաններ:

Յիշատակութեան է արժանի 1795-1807 թուականների եկեղեցու եկեւմտից հաշիւնների մատեանը⁴⁰: Յայտնի է, որ 1809ին եկեղեցուն պատկանող դուռքանը (խանութ, կրպակ եւ այլն) փարեկեցների է փոնչի Ղազարին, որն էլ դրա համար վճարել է ձով տրուել է փոնչի Ղազարին, որն էլ դրա համար վճարել է տարեկան 15,500 թուման⁴¹: Պահպանուել է 1816ի եկեղեցու օգտարեկան հաշիւնների մատեանը⁴²: 1818 տին հաւաքուած եւ ծախսուած դրամների մատեանը: 1818 Յուլիսից սկսած յիշատակում է Նորաշէնի երէցփոխան Սօսի

38 ՄՄ, Կ/Դ, Բ-ԴԲ. 4, վաւ. 13:

39 Վէթը կայացել է Յրանում, որ ուսուցչապետ Փիլիպպոս ժիյ. Ղայթմազեանը ժամանակին դիմել է Հերակլ արքային եւ Նորաշէնի շրջակայգեանը ժամանակին դիմել է Հերակլը բաւարարել է խնդրանքը եւ եկեղեցու բում տեղ խնդրել: Հերակլը բաւարարել է խնդրանքը եւ եկեղեցու բում տեղ տեղ է տուել: Ժամանակ անց վէճ է առաջացել պարսպից դուրս տեղ է տուել: Ժամանակ անց վէճ է առաջացել պարսպից դուրս տեղ է տուել: Փիլիպպոս ժահանայի միջեւ: Ըստ պի տակ ապրող գեղջուկների եւ Փիլիպպոս ժահանայի միջեւ: Ըստ պի տակ ապրող գեղջուկների եւ Հաղբատի բեմակալի վկայութեան՝ Ղայթմազեան ժահանա պարսպից ներս է տեղ գրադաւում:

40 ՄՄ, Կ/Դ, Բ-ԴԲ. 6, վաւ. 72:

41 ՄՄ, Կ/Դ, Բ-ԴԲ. 21, վաւ. 86:

42 ՄՄ, Կ/Դ, Բ-ԴԲ. 29, վաւ. 159, բարգմ. վրացերէնից:

Յովհաննիսեանը⁴³, ով գրառել է եկեղեցու 1818-1819ի եկամուտների (աջահամբոյք, խաչահամբոյք, լուսագին եւ այլն) ծախսերի ցուցակը⁴⁴: Երէցփոխանը կազմել է 1819ի Յունուարի 30ից մինչեւ Նոյեմբերի 6ը ընկած ժամանակահատուածի եկեղեցական արդիւնքի մատեանը⁴⁵: Պահպանուել է Նորաշէնի աւագ քահանայի, երէցփոխանի եւ այլոց ստորագրութեամբ հաշուետու տեղեկագրեր նոյն եկեղեցու մուտքի եւ ելքի հաշիւների մասին, որ կազմուել է 1820ի Մարտի 8ին⁴⁶: Առկայ է 1826ի եկեղեցու տարեկան արդիւնքի հաշիւը⁴⁷, ինչպէս նաեւ 1849ի Նորաշէնի կալուածքների, դրանցից ստացած եկամուտների եւ ծախսերի վերաբերեալ հաշիւների մատեանները: 1849ի Նորաշէնը ունեցել է մի սենեակ եւ մի կրպակ, անշարժ կալուածքների արժէքը կազմել է 375 ռ., մայր գումարը՝ 2562 ռ. 50 կ., եկեղեցուց ստացուել է 494 ռ. 45½ կ., իսկ անշարժ կալուածքից՝ 102 ռ. 50 կ. արդիւնք, իսկ ծախսը՝ 28 ռ. 62½ կ. 48: 1870ին եկեղեցին ունեցել է 3 սենեակ՝ ուխտաւորների համար: Եկեղեցու մայր գումարը կազմել է 11,000 ռ.: Արդիւնք ստացուել է 869 ռ. 64½ կ.: Ծախսը կազմել է 617 ռ. 36½ կ.⁴⁸:

1837ին կազմուել է Նորաշէնի եկեղեցու շարժական եւ անշարժ կայքի ցուցակը, որում առկայ են բազմաթիւ թանկարժէք շաղղեր եւ անօթներ, տպագիր Աւետարաններ եւ այլն⁵⁰: Յիշազարդան են արժանի 1899ի գոյքացուցակում նշուած երկու ձետակման ու արժանի 1899ի գոյքացուցակում⁵¹: Անշարժ կայքից նշուել ուագրերը՝ Աւետարանը եւ Տաղարանը: Անշարժ կայքից նշուել կողմում պարապին կից՝ վարձով տրուած կրպակը եւ այլն:

Ինչ վերաբերում է Նորաշէնի հոգեւորականներին եւ նրանց անընդմէջ ծառայութեանը՝ Սուրբ Աստուածածին եկեղե-

43 ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիւ, թղթ. 164 թ, վաւ. 1343:

44 ՄՄ, Կ/դ., թղթ. 32, վաւ. 232:

45 ՄՄ, Կ/դ., թղթ. 34, վաւ. 327ա, թնագիր, ձեռագիր:

46 ՄՄ, Կ/դ., թղթ. 36, վաւ. 54:

47 ՄՄ, Կ/դ., թղթ. 56, վաւ. 282, թնագիր, ձեռագիր:

48 ՀԱ.Ս, Փ. 53, գ. 1, գ. 3818, թ. 141, թնագիր, ձեռագիր:

49 ՀԱ.Ս, Փ. 53, գ. 1, գ. 3857, թ. 11, թնագիր, ձեռագիր:

50 ՀԱ.Ս, Փ. 56, գ. 6, գ. 39, թ. 43, թնագիր, ձեռագիր:

51 ՀԱ.Ս, Փ. 53, գ. 1, գ. 1219, թ. 186-189, թնագիր, ձեռագիր:

ցում, ապա ԺՀ. դարի վերջին թիֆլիսում ճանաչուած քահանաներից է եղել եկեղեցու միաբան Տէր Յակոբը, որի մասին յիշատակուել է դեռեւս 1784ին (մահացել է 1816ի Ապրիլին)⁵²: Այդ ժամանակաշրջանում մի շարք վրացերէն վաւերագրեցում, յաճախ նաեւ իրենց կնիքներով, յիշատակում են Նորաշէնի հոգեւորականներից՝ Տէր Դաւիթը, Տէր Յորը, Տէր Մելիքսէթը, Տէր Մկրտիչը եւ այլք: Եկեղեցու գաւթում են ամփոփուել մի շարք հոգեւորականների եւ աշխարհական յայտնի գործիչների աճիւններ, որոնցից մեզ են հասել՝ 1782ի Տէր Ահարոն քահանայի տապանաքարը, որի վրայ փորագրուած է հետեւեալը: «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆՈՐԱՇԷՆՈՒԻ Տէր ՄԵԼԻՔԻՄԵԹԻ ՈՐԴԻ Տէր ԱՀԱՐՈՆԻՆ: ՈՎ, ՈՔ ԿԱՐԴԱՔ՝ ՈՂՈՐՄԻ ԱՍՔ: ԹՎԻՆ ՌՄԼԱ. [1782]»⁵³:

1816ի Յուլիսի 2ին Վրաստանի թեմակալ Ներսէս Աշտարակեցին Նորաշէնի եկեղեցու ժամօրհնութեան պաշտօնը յանձնել է Մովսէս քհյ. Ապողաւրեանին⁵⁴: Երկու օր անց՝ Յուլիսի 4ին, է Ներսէսը յանձնարարել է Մինաս արքեպիսկոպոսին Նորաշէն եկեղեցու բոլոր հին ու նոր հաշիւների վերաստուգումը: 1819ի կեղեցու բոլոր հին ու նոր հաշիւների վերաստուգումը՝ 1819ի առաջին կիսում եկեղեցու աւագ քահանան Տէր Պետրոսն էր, իսկ առաջին կիսում Տէր Պետրոսն էր Վարդան Յովհաննէսովը⁵⁵: Տէր Պետրոսը հաւանաբերէցիսանը՝ Վարդան Յովհաննէսովը՝ Տէր Պետրոսը հաւանաբար այդ տարի էլ վախճանուել է:

1819ի Նոյեմբերին յիշատակուել են եկեղեցու հետեւեալ միաբանները. Տէր Գէորգ Տէր-Ահարոննեան, Տէր Յարութիւն Տէր-Սահակեան, Տէր Գաբրիէլ Տէր-Յովսէփեան, Տէր Գաբրիէլ Տէր-Պէտրէկեան, Տէր Ստեփան Տէր-Սարգսեան եւ Տէր Եսայի⁵⁶: Պարոնբէկեան, Տէր Ստեփան Տէր-Սարգսեան եւ Տէր Եսայի⁵⁷: Տէր Յարութիւնը յիշւում է նաեւ 1816ին⁵⁸:

1841ին եկեղեցում քահանայագործել են Յովհաննէս աւագ քհյ. Զայրապետեան Պարոնբէկեանցը (76 տարեկանին չորս ասուածութիւն ստացել է 1775 Յունիսի 7ին, քահանայ է տիճանի դպրութիւն ստացել է 1775 Յունիսի 7ին, քահանայ՝ 1802ին), Գրիգեռնագրուել 1785 Մարտի 1ին, աւագ քահանայ՝ 1802ին), Գրի-

52 ՄՄ, Ա. Երիցեանի արխիւ, թղթ. 159, վաւ. 112 ա: Տե՛ս նաեւ ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիւ, թղթ. 164թ, վաւ. 945: Աշտարակեցու արխիւ, թղթ. 164թ, վաւ. 945:

53 Պ. МУРАДЯН, Армянская Эпиграфика Грузии, Тбилиси, Ереван, 1988, ст. 78.

54 ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիւ, թղթ. 164թ, վաւ. 965:

55 ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիւ, թղթ. 164թ, վաւ. 967:

56 ՄՄ, Կ/Դ, թղթ. 34, վաւ. 327 թ, թնագիր, ձեռագիր:

57 ՀԱԱ, Փ. 35, գ. 1, գ. 745, թ. 11:

58 ՄՄ, Կ/Դ, թղթ. 29, վաւ. 43:

գոր քհյ. Տէր-Գրիգորեան Տէր-Մելքիսեդէկեանցը (50 տարեկան, հոգեւոր տոհմից, չորս աստիճանի դպրութիւն ստացել է 1807ի Մայիսի 6ին, քահանայի կոչում ստացել է 1831ի Փետրուարի 7ին, 1838ի Հոկտեմբերի 1ից հանդիսացել է հոգաբարձութեան անդամ), Սրապիոն քհյ. Տէր-Մովսիսեան Տէր-Մելքիսեդէկեանցը (32 տարեկան, հոգեւոր տոհմից, չորս աստիճանի դպրութիւն ստացել է 1823 Մարտի 6ին, քահանայ է ձեռնադրուել 1832 Հոկտեմբերի 30ին), Մկրտիչ քհյ. Տէր-Գէորգէեան Տէր-Ահարոնեանցը (36 տարեկան, հոգեւոր տոհմից, չորս աստիճանի դպրութիւն ստացել է 1831ի Մարտի 10ին), Սահակ քհյ. Տէր-Յարութիւնեան Սահակեանցը (32 տարեկան, հոգեւոր տոհմից, չորս աստիճանի դպրութիւն ստացել է 1832ի Յուլիսի 26ին, քահանայ է ձեռնադրուել 1834ի Յուլիսի 26ին), Սահակ քհյ. Տէր-Եսայեան Զիալեանցը (32 տարեկան, հոգեւոր տոհմից, չորս աստիճանի դպրութիւն ստացել է 1833ի Յուլիսի 22ին, քահանայ է ձեռնադրուել 1836ի Դեկտեմբերի 27ին)⁵⁹: Յովհաննէս աւագ քահանան վախճանուել է 1846ի Յունուարի 1ին⁶⁰, իսկ Գրիգոր քհյ. Տէր-Գրիգորեան՝ 1848ի Ապրիլի 2ին⁶¹: Ապրիլի 5ին Ս. Սագոնովը յայտնել է Ներսէս կաթողիկոսին, թէ փոխարքայ Վորոնցովը թոյլատրել է Նորաշէնի ծխական քահանային յուղարկաւորելու նոյն եկեղեցու գաւթում⁶²:

1875ի Մարտին Նորաշէնի Սրապիոն աւագ քհյ. Տէր-Մովսիսեանցը եւ երկցիկոխան Ստեփաննոս Ստեփանեանցը Փոքր Ասիայի հայ սովիելների օգտին եկեղեցու ծխականներից հանգանակել են 98 ո. 50 կ. գումար՝ իսկ 1879ին նոյն անձինք եկեղեցում 116 ո. 20 կ. գումար հանգանակել են Ռուբինեան երկութեանցում 1885ին՝ Նշենք, որ Վիրաբործական ուսումնարանի օգտին՝ կոնսիստորիան խնդրագրով դիմել է Սուրբ էջմիածնի հայոց կոնսիստորիան ինդրագրով դիմել է Սուրբ հայոց կոնսիստորիան իննը տարի հաւատարիմ ծառայութեան Մինոդին՝ աւելի քան իննը տարի հաւատարիմ ծառայութեան

59 ՀԱ.Ա., ֆ. 53, գ. 1, գ. 48, (մաս 2): Տե՛ս նաև ֆ. 56, գ. 1, գ. 1077, (մաս 1), թ. 152, 202, թնագիր, ձեռագիր:

60 ՀԱ.Ա., ֆ. 56, գ. 1, գ. 2091, թ. 66, թնագիր, ձեռագիր:

61 ՀԱ.Ա., ֆ. 56, գ. 1, գ. 2421, թ. 86, թնագիր, ձեռագիր:

62 ՄՄ, Կ/Դ, թթ. 137, վաւ. 154:

63 «Մելու Հայաստանի», 1875, № 12, 29 մարտի:

64 «Փորձ», 1879, № 6:

Համար Ստեփաննոս Ստեփանեանցին արծաթէ մեղալով պարզեւատրելու մասին⁶⁵:

Շուրջ տաս տարի անց՝ 1885ի Փետրուարի 10ին, թեմական պատգամաւորի ընտրութեան համար եկեղեցուց ընտրուել են Հետեւեալ պատուիրակները՝ Ա. Մանթաշեան, Ա. Գիշմիշեան եւ Ա. Տէր-Յակոբեան⁶⁶: Նրանք Մարտի 9ին թեմակալ առաջնորդի մօտ մասնակցել են մէկ պատգամաւորի ընտրութեանը, որն Ապրիլի 19ին Սուրբ Էջմիածնում կմասնակցէր Վեհափառ կաթուղիկոսի ընտրութեանը⁶⁷:

1888ին յիշատակուել է եկեղեցու Թաղէոս քհյ. Երուանդեանցը⁶⁸: Ի դէպ, պատմաբան Ալեքսանդր Երիցեանը իր աշխատութեան մէջ զետեղել է հանգուցեալ Եփրեմ կաթողիկոսի իւղաներկ պատկերը եւ նշել, որ իսկական օրինակը նա վերցրել է Նորաշէն եկեղեցու միաբան Տէր Թաղէոս քհյ. Երուանդեանից (Քվոյեանց): Հստ պատմաբանի, այդ կտաւի հեղինակը հաւանաբար Նաղաշ Յովնաթանն է⁶⁹:

1902ի Փետրուարի 26ին լրացել է Նորաշէնի արժանայիշատակ միաբան Գաբրիէլ Պատկանեանի ծննդեան հարիւրամեակը: Եկեղեցու միաբանութիւնը, գնահատելով իր հանգուցեալ նախորդի բարձր արժանիքները՝ որպէս քահանայի, քարոզչի, հրապարակախօսի, գրողի, ուսուցչի, բանաստեղծի եւ հասարակական գործչի, պատիւ է համարել իրեն՝ պատուել նրա ծննդեան հարիւրամեակը հոգեհանգստեան պաշտամունքով⁷⁰: Մասնակցել են մտաւորականներ, մի քանի քահանաներ եւ թեմի առաջնորդական փոխանորդ Գաբրեգին վրդ. Յովսէփեանը (փոխանորդ է եղել 1900-1902):⁷¹

1903ին եկեղեցում քահանայագործել են Գէորգ աւագ քհյ. Տէրտշէրեանցը, Դաւիթ քհյ. Գիրգիրեանցը, Թաղէոս քհյ. Եր-

65 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2278, թ. 522 շրջ., բնագիր, ձեռագիր:

66 «Մեղու Հայաստանի», № 12, 14 Փետրուար 1885:

67 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 130, թ. 13 և շրջ., բնագիր, ձեռագիր:

68 «Նոր Դար», 1888, № 67, 4 Մայիս:

69 Ա. ԵՐԻՑԵԱՆՑ, Աշխատանք, էջ է:

70 «Մշակ», 1902, № 46, 2 Մարտ: Տե՛ս Աաեւ 1902, № 48, 5 Մարտ:

71 «Մշակ», 1902, № 48, 5 Մարտ:

ուանդեանցը եւ Սարգիս քհյ. Շիոյեանցը⁷²: Հարկ է նշել, որ գեռեւս 1898 Յունուարի 30ին Մկրտիչ կաթողիկոսը կոնդակով նորաշնի եկեղեցու միաբան Սարգիս քհյ. Շիոյեանցին չնորհել է ոսկեզօծ լանջախաչ կրելու իրաւունք⁷³:

1906ին եկեղեցու միաբան Գէորգ աւագ քհյ. Տէրտէրեանցը ունեցել է 40 ժուիս, Դաւիթ քհյ. Գիրգիղեանցը՝ 25, Թաղէսս քհյ. Երուանդեանցը՝ 81, իսկ Սարգիս քհյ. Շիոյեանցը՝ 126 ժուիս: Եկեղեցին ընդհանուր հաշուով ունեցել է 272 ժուիս⁷⁴:

1920ի Փետրուարի վերջին նշուել է նորաշն եկեղեցու միաբան հայր Շիոյեանի քահանայական եւ մանկավարժական գործունէութեան 25ամենակը: Այս առթիւ «Մշակը» գրել է. «Յարգելի տէր հայրը Թիֆլիսի հայութեան մէջ վայելում է ժողովրդականութիւն եւ յարգանի իր գործունէութեամբ, մանաւանդ յօգուտ վրացախօս հայերի Թիֆլիսի նահանգի գիւղերում՝ հայկական դպրոցներ բանակուն աջակցելով ըստ ամենայնի: Յորելեարի անունով ստացուել է նաեւ Վեհափառ Կաքուղիկոսից օրինութեան կոնդակ»⁷⁵:

1909ի Սեպտեմբերի վերջին վախճանուել է Թիֆլիսեցի վաճառական կարապետ Վարդանեանը: Նրա աճիւնը ամփոփուել նորաշնի եկեղեցու գաւթում: Հանգուցեալը կտակով 65,000 է նորաշնի եկեղեցու գաւթում: Հանգուցեալը կտակով⁷⁶: Նա 12,000 ռ. էր նույիրել բարեգործական նպատակներով՝ նա 12,000 ռ. կտակել էր նորաշնի ծխական Սուրբ Մարիամեան օրիորդաց կտակել էր նորաշնի ծխական նույիրելը՝ ի յիշատակ ինքան տիկին կատարինէն: Նրանց ժառանգները՝ ի յիշատակ ինքան ծնողների, եկեղեցուն նույիրաբերել են բաւականին խոշոր բենց ծնողների, եկեղեցուն նույիրաբերել են բաւականին խոշոր բացի բազմաթիւ կտակներից, որոնք արուել են նոգումարը⁷⁸: Բացի բազմաթիւ կտակներից, որոնք արուել են նորաշնի եկեղեցու օգտին, հարուստ ծխականները տարիների ընթացքում եկեղեցուն են ընծայել նաեւ բազմաթիւ արժէքաւոր զարդեր եւ անօթներ:

72 ՀԱԱ, ֆ. 53, գ. 1, գ. 335, թ. 115-116:

73 ՀԱԱ, ֆ. 35, գ. 1, գ. 73, թ. 204, պատճեն, ձեռագիր:

74 ՀԱԱ, ֆ. 35, գ. 1, գ. 200, թ. 30 շրջ., բնագիր, ձեռագիր:

75 «Մշակ», 1920, 17 Փետրուար:

76 «Հովիւ», 1909, № 37, 4 Հոկտեմբեր, էջ 591:

77 «Հովիւ», 1909, № 39, 18 Հոկտեմբեր, էջ 621:

78 ՀԱԱ, ֆ. 9, գ. 544, թ. 2, բնագիր, ձեռագիր:

Անշուշտ, յիշատակութեան են արժանի Նորաշէնի եկեղեցու ծխերը, դրանց միջոցներով իրականացրած ձեռնարկներն ու նըւիրատութիւնները:

1841ի տուեալներով Նորաշէնի եկեղեցին ունեցել է 350 ծուխ, եւ նրան կցուած է եղել Քարափի Սուրբ Գէորգ հայկական եկեղեցին⁷⁹:

Նորաշէնի եկեղեցու ունեցած երբեմնի նշանակութիւնն ու կարեւորութիւնը՝ թիֆլիսահայութեան կեանքում պայմանաւորուած է եղել նաեւ եկեղեցու կրթադաստիարակչական եւ հայրենասիրական գործունէութեան շնորհիւ:

Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցուն կից գործել են ծխական դպրոցներ: Նշենք, որ Նորաշէնի ժամկոչ Եղիազար Գալստեանի տիպիկ «խալֆայալկան» ուսումնարանը համարուել է Թիֆլիսում գոյութիւն ունեցած առաջին դպրոցը, որ բացուել է 1795ին եւ իր գոյութիւնը շարունակել է մինչեւ 1828 (մէկ այլ տուեալով՝ մինչեւ 1834): Ինչպէս գրել է Ա. Երիցեանը «Ամրող Բաղաքիս մէջ բազ հայերէն իմացողը համարւում էր միմիայն Նորաշէն եկեղեցւոյ երկու ոտքով կաղ ժամկոչ Եղիազար Գալստեանը, որ իւր կաղութեան պատճառով մնացել էր առանց ձեռնադրուելու»⁸⁰:

Նորաշէնի ծխական արական դպրոցը հաւանաբար բացուել է 1858ին: 1873ին դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ, 38 աշակերտ⁸¹:

Հայ աղջիկների համար բացուած հնագոյն եւ նշանաւոր դպրոցներից էր Նորաշէնի Սուրբ Մարիամեան օրիորդաց ուսումնարանը: Հիմնադրուել է 1866ին հայ ականաւոր մանկավարժ Խորէն Ստեփանէի կողմից⁸²: 1871ին այդ դպրոցի տեսուչ է նշանակուել Գրիգոր Արծրունին, որ մինչ այդ էլ այնտեղ աշխարհագրութիւն է դասաւանդել: 1873ին դպրոցը ունեցել է 16 ուսուցիչ, 80 աշակերտուհի: 1878ին բարեգործ Գրիգոր Իզմիրեանը ազգասիրական զգացմունքով դրդուած իր եռայարկ տուուածից, 16,000 ռ., կտակել է Նորաշէնի եկեղեցուն նըր, որ գնահատուել է 16,000 ռ.:

79 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 48, (մաս 2), թ. 342-344:

80 ԵրիցեանՅ, Ա., Ամենայն հայոց կարողիկոսութիւնը եւ կովկասի Հայք XIX-րդ դարում, մասն Ա. (1800-1832), Թիֆլիզ 1894, 78-79:

81 ԽՈՒԴՈՅԵԱՆ, Ա., Արեւելահայ դպրոցները 1830-1920 քուակամմերիմ, Երևան 1987, 592-593:

82 Անդ, 591:

եւ Մարիամեան օրիորդաց դպրոցին⁸³: 1896ին դպրոցը փակուել է եւ վերաբացուել միայն 1905ի վերջին:

1911 Մարտի 12ին Վիրահայոց թեմի առաջնորդի պաշտօնակատար Եփրեմ Եպիսկոպոսը այցելել է Նորաշէնի Սուրբ Մարիամեան օրիորդաց ծխական դպրոց⁸⁴: Դպրոցում հոգաբարձութեան նախագահ Մարգիս աւագ քհ. Շիոյեանի ջանքերով հաստատուել էր չքաւոր աշակերտներին ձրի ճաշ մատակարարող ընկերութիւնը⁸⁵:

1914 Դեկտեմբերի 20ին թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսը, հաշուի առնելով պատերազմական իրադրութիւնը, շրջաբերական է ուղղել Նորաշէնի եկեղեցու Մարիամեան ծխական դպրոցի վարչութեանը՝ դպրոցը ժամանակաւորապէս՝ մինչեւ 1915 Յունուարի 8ը փակելու մասին⁸⁶:

1917ին Նորաշէնի դպրոցը համարուել է միջնակարգ: Յաջորդ տարի Նոյեմբերին դպրոցում գործող երեք բաժանմունքներում միասին սովորել է 41 աշակերտուհի, դասաւանդել է 3 ուսուցիչ:

1919 Սեպտեմբերի 3ին Վիրահայոց Ազգային խորհուրդը շրջաբերական է ուղղել Նորաշէնի դպրոցին, որ խորհրդի Մայիսի 30ի նիստի որոշման համաձայն դպրոցներում կրօնի դասասի առգելութիւնը արգելուել է⁸⁷: Իսկ Դեկտեմբերի 11ին երեկոյեան ւանդութիւնը արգելուել է դաշտին տեղի է ունեցել հայ-Վիրահայոց Ազգային խորհրդի դաշտին տեղի է ունեցել հայ-Վիրահայոց Ազգային խորհրդի դաշտին խորհրդի ժողով, որին կական դպրոցների մանկավարժական խորհրդի ժողով, որին կական դպրոցների մանկավարժական խորհրդի ժողով:⁸⁸ Ներկայ է գտնուել նաեւ Նորաշէնի դպրոցի ներկայացուցիչը:

Դպրոցի յետագայ ճակատագիրը մեզ յայտնի չէ: Հարդի է նշել, որ դեռեւ 1893ի վերջում բժիշկ Վահան Արծրունու նախաճեռնութեամբ եւ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ջանքերով, եկեղեցիներին կից մի քանի դպրոցներում հիմնուել էին փոքրիկ դպրոցական դեղարաններ, որոնք ըստ համարական մասնակից առաջ էին առաջ գտնվուած անդամական դպրոցական դեղարաններ, որոնք բաղկացած էին ամենաանհրաժեշտ եւ անպնաս դեղերից: Դեղերը

83 «Արարատ», 1878/ԺԱ-ԺԲ, 451:

84 «Սուրբանդակ», 1911, № 264, 15 Մարտ:

85 «Սուրբանդակ», 1911, № 324, 18 Յունիս:

86 ՀԱ.Ա., Փ. 35, գ. 1, գ. 728:

87 ՀԱ.Ա., Փ. 441, գ. 1, գ. 48, թ. 55, թնագիր, մելնագիր:

88 ՀԱ.Ա., Փ. 441, գ. 1, գ. 100, թ. 1, թնագիր, մելնագիր:

պահւում էին փոքրիկ պահարաններում, որի բանալիները յանձնուած էին ուսուցիչներից մէկին, ու դեղերը տրում էին աշակերտին՝ բժշկի խիստ հսկողութեան ներքոյ: Բժիշկ Արծրունին շաբաթը մէկ անգամ՝ որոշեալ օրերին այցելում էր այդ դպրոցները եւ խնամում հիւանդ երեխաներին: Այդպիսի դպրոցական դեղարան էլ հիմնուել էր Նորաշէնի եկեղեցու դպրոցում⁸⁹: 1894 Սեպտեմբերին նշուած է, որ «Նորաշէնի Սուրբ Մարիամեան եկեղեցական ծխական օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը նախագահ Զիւանեանց քահանայի միջոցով իր շնորհակալութիւնն է յայտնել բժշկապետ Վահան Արծրունուն, որ մի ամբողջ տարի շարունակ շաբաթը մի անգամ այցելել է ուսումնարան՝ ճրիաբար սաներին բժշկելու»:

Նորաշէնը, ինչպէս Թիֆլիսի միւս հայկական եկեղեցիները, խորհրդային առաջին տարիներին, հակակրօնական քաղաքականութեան շնորհիւ յայտնուում են փակման վտանգի առաջ: Այդ առթիւ 1925 Յունիսի 24ին Նորաշէնի եկեղեցական խորհրդի անդամները յայտարարութիւն են ուղղել Վրաստանի Հայոց Թեմական եկեղեցական խորհրդին: «Նորաշէն եկեղեցուն սպառնում է վտանգ: Քաղգործկոմը փողոցը լայնացնելու համար ցանկանում է եկեղեցու արեւելեան պատը ամբողջապէս բանդել, որով ոչնչանում են խորանները, բեմը. բանդուած պատի փոխարեն ցանկանում են նոր պատ կառուցանել, երեք-չորս արշին կտրելով լայնութեամբ եկեղեցուց: Խորհուրդս, ի նկատի առնելով, որ հարկաւոր է շուտափոյթ առաջն առնել այդ վտանգի, խորհրդիս 24ի ժողովում որոշեց լիազօր ներկայացուցիչ նշանակել Գէորգ Ղալամբարեանին, որ դիմէ Քաղգործկոմին, Հնագիտական ընկերութեան, ցենկային եւ այլ մինիստրութիւններին եւ անձանց, որ կ'երաշխաւորի պաշտպանելու եկեղեցու իրաւունքները, եւ ազատելու եկեղեցիս վտանգից: Եւ այս մասին յայտնել Խորհրդիդ եւ խնդրել, որ իր լիազօր ներկայացուցիչ Գ. Ղալամբարեանին տրամադրէ խորհրդիս եւ այս մասին տայ նրան պատշաճ վկայական գրութիւն: Լիազօրի վարաւորութիւնը կվճարէ եկեղեցին»⁹⁰:

Նոյն թուականի Յուլիսի 8ին Նորաշէնի եկեղեցական խորհուրդը (նախագահ՝ Լեւոն Մհերեան, քարտուղար՝ Ս. քահանայ)

89 «Մշակ», 1894, № 1, 1 Յունուար:

90 «Նոր Դար», 1894, № 147, 6 Սեպտեմբեր:

91 ՀԱԱ, Փ. 148, գ. 1, գ. 12, թ. 2:

դարձեալ դիմել է Վրաստանի Հայոց Թեմական Եկեղեցական խորհրդին՝ Եկեղեցին քանդելու վտանգից ազատելու մասին. «Նորաշեն եկեղեցուն սպառնացող վտանգի պատճառով համաձայն խորհրդիս որոշման եւ դիմումին՝ խորհուրդը համայնքուեց եւ տրամադրեց մեզ իր լիսազօր Եկեղեցացուցիչ Գ. Ղալամբարեանցին՝ եկեղեցու իրաւունքները պաշտպանելու եւ ազատելու եկեղեցին ժամանգից: Սորանով խորհուրդս պարտ է զգում յայտնելու իր գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը Գ. Ղալամբարեանցի կատարած աշխատանքի մասին: Նա ամէն գործ դրեց եւ իր դիմումներով, ուր հարկն է՝ գրաւոր եւ բանաւոր, նշանակել տուեց մի քանի անգամ յանձնաժողովներ, բաղկացած նարտարապետներից եւ մանաւանդ հետագէտներից եւ գիտնականներից, որոնք առ տեղումն զննելով եւ բննելով եկեղեցու նարտարապետական կառուցուածքը եւ նրա գրաւած տեղը Տիվիսի հնագոյն եւ պատմական նշանակութիւն ունեցող եկեղեցիների մէջ, իրեւ ուրոյն նարտարապետական շենք, որ իր ժամանակին գրաւել է եւրոպական նանապարհորդների ուշադրութիւնը, կարեւոր համարեցին այդ եկեղեցու ամրողական պահպանութիւնը: Որոշուած է ձեռք չտալ եկեղեցուն»⁹²:

Ցիշատակութիւն է պահպանուել՝ 1927 Սեպտեմբերի 18ին Եկեղեցում կատարուած նատալիա Գուրգէնբէկեանի 40օրեայ մահուան կապակցութեամբ հոգեհանգստի մասին⁹³:

Նորաշէնի Եկեղեցին գործել է մինչեւ 1933ի վերջը: 1933 Եկետեմբերի 23ին Նորաշէնի Եկեղեցու հոգաբարձութեան անունից Եղիա քէյ. Մանասեանը Վրաստանի Հայոց Թեմական խորհրդին գրել է. «Սորանով յայտնում ենք խորհրդիդ, որ երեկ, Դեկտեմբերի 22ին, երեկոյեան ժամը 5ին, եկան Անաստուածների ընկերութեան կողմից, կմքեցին եկեղեցու դաւոր եւ բանալին առան ինձանից»⁹⁴, 1934ի Յունուարին Թեմական խորհրդը դիմել է Եղիա քահանային՝ հետեւեալ յայտարարութեամբ. «Ի նկատի ունենալով այս հանգամանքը, որ Նորաշէնի Սուրբ Աստուածին եկեղեցին կառավարական կարգադրութեամբ փակելուց յետոյ ծխական խորհրդի անդամ գանձապահ Աննա Յարութիւնեանի մօտ մնական եկեղեցու թագավորութեամբ, որ իր հաշիւները, փաստարդերով ցին

92 ՀԱԱ, ֆ. 148, գ. 1, գ. 12, թ. 3 եւ շրջ., բնագիր, ձեռագիր, նաև «Եղիածին», 2010/Ե, 83-84:

93 «Заря Востока», 1927, 17 сентября, № 1579.

94 ՀԱԱ, ֆ. 148, գ. 1, գ. 24, թ. 1:

հանդերձ՝ ուստի թիմական խորհուրդը առաջարկում է ձեզ, այս մասին անձամբ յայտնել Աննա Յարութիւնեանին եւ առաջարկել նրան իւր մօտ գտնուած նորաշէնի եկեղեցու բոլոր հաշիւները եւ դրամները՝ իրենց փաստաբերով Ձեզ հետ միասին երեք օրուայ ընթացքում ներկայացնել խորհրդիս՝ ի տնօրինութիւն»⁹⁵,

Այսպէս, 1933ի վերջից նորաշէնը դադարեց գործելուց եւ փակուեց մինչեւ խորհրդային իշխանութեան վլուգումը։ 1972ին եկեղեցում տեղակայուած է եղել Վրացական ՍՍՀ ԳԱ գիտական գրադարանը⁹⁶։ Ամենայն Հայոց Վազգէն Ա. կաթողիկոսը, խիստ մտահոգուած լինելով Վրացական ՍՍՀի տարածքում առկայ հայկական եկեղեցիների վերաբացմամբ, խնդրել է իրեն փոխանցել նորաշէնի եկեղեցու լուսանկարները, որոնցից մէկը՝ ճակատային լուսանկար է, իսկ միւսը նկարուել է թռչնի թռիչքի բարձրութիւնից⁹⁷։

Այս ամէնը վկայում եւ փաստում է, որ նորաշէնը ժէ դարից մինչեւ խորհրդային ժամանակները (մինչեւ եկեղեցու փակումը), գործել ու ճանաչուել է իբրեւ անվերապահօրէն լուսաւորչաւան հայկական եկեղեցի։

Նորաշէնի հայոց Սուրբ Աստուածածին եկեղեցին, ինչպէս եւ միւս հայկական եկեղեցիները, Վրաստանի անկախութեան առաջին տարիներից սկսած, մինչ օրս իշխանութիւնների կողմից յայտնուել էր անխնամ եւ բարձիթողի վիճակում։

2008ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի մամլոյ դիւանը անդրադառնալով նորաշէնի եկեղեցուն, յայտարարել է. «Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց մտահոգութիւնն ու վրացութիւնների կողմից թրիլիսիի Սուրբ նորաշէն եկեղեցու ներկայացուցիչների կողմից առաջարկած հայութեան անունից իր քառական աւելի քան 400,000 վրաստանարեակ հայութեան անունից իր մտահոգութիւնն ու վրացութիւնների կողմից արտայայտում Վրաց Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների կողմից թրիլիսիի Սուրբ նորաշէն հայկական եկեղեցու և նրա յարակից տարածքի դէմ կատարուող կուել է հոգեւոր գործունեութեան համար եւ օգտագործուել որպէս կուել է հոգեւոր գործունեութեան համար եւ օգտագործուել որպէս գրապահոց։ Աւաղ, Վրաստանի պետական անկախութեան վերա-


95 ՀԱԱ, ֆ. 148, գ. 1, գ. 24, թ. 18:

96 ՀԱԱ, ֆ. 469, գ. 14, գ. 329, թ. 2, ոռուերէն, թնագիր, ձեռագիր:

97 ՀԱԱ, ֆ. 469, գ. 14, գ. 329, թ. 9, ոռուերէն, թնագիր, ձեռագիր:

ղադրուել են նոր դռներ եւ պատուհաններ, եկեղեցու տարածք են վերադարձուել գերեզմանաքարերը:

ԱՐՄԵՆ ԱՍՏՏՐԵԱՆ



Summary

NORASHEN ST. ASTVATSATSSIN CHURCH OF OLD TIFLIS

ARMEN ASATRYAN

Norashen is one of the most outstanding Armenian churches in Tiflis, situated in the ancient central district of the city. According to the church foundation protocol, it was built in 1507 by an Armenian tycoon named Satat who spent his property on the construction of the building. Over the centuries, the church underwent several major repairs in 1650, 1795, 1808, 1897 and in other years, and that was mentioned in many records.

A number of foreign travelers who visited Tiflis mentioned Norashen Church. In 1673 Jean Chardin from France listed Norashen among other functioning Armenian churches. According to an act of donation of the Catholicos of All Armenians Simeon Yerevantsi, in 1773 the church was passed to the Haghpat Monastery and was included in the Diocese of the Armenian Apostolic Church in Georgia much later. Norashen was closed in Soviet times and is currently being rebuilt and renovated.

There were parish schools adjacent to the church. Back in 1795 Norashen ringer Yeghiazar Galstyan founded the first parish school in Tiflis, near the church. And the Mariamian Girl's School was founded in 1866.

